**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 փետրվարի 2021 թվականի N 53-Ա

## ՎԻՏԱԼԻ ՏԿԱՉԵՎԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Վիտալի Տկաչևը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2021 թվականի հունվարի 19-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի - փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2.Վարչական ակտը ընդունելու հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսական,հաշվապահական հաշվառման,եկամուտների գանձման և հավաքագրման բաժնի կողմից տրված «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող Հայաստանի Հանրապետության Ոստիկանության ՃՈ կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման և գնահատման տվյալների՝ քննարկվող անշարժ գույքը Տաշիր համայնքի քաղաք Տաշիր, փողոց Երևանյան, թաղ. 14, տուն 10 հասցեում հաշվառված NISSAN ELGRAND 3.5L մակնիշի, 35QC430 հերթական համարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Վիտալի Տկաչևի սեփականությունը, որը «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Նշված գույքի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 290167 (երկու

հարյուր իննսուն հազար հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ, ինչը 2018-2020-ն ընկած ժամանակահատվածում չի վճարվել: Քաղաքացի Վիտալի Տկաչևի կողմից նշված ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 53917 (հիսուներեք հազար ինը հարյուր տասնյոթ) ՀՀ դրամի չափով:

2021 թվականի հունվարի 19-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի փետրվարի 1-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Վիտալի Տկաչևը (հիմք՝ փոստային անդորրագիր 27 .01.2021) : Վիտալի Տկաչևը չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:
3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր,կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի երրորդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ, գույքահարկի գումարը վճարվում է համայնքի վարչական տարածքում հաշվառված փոխադրամիջոցների համար հարկվող օբյեկտի հաշվառման վայրի համայնքի բյուջե:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.04 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի ՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 398-րդ,«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Քաղաքացի Վիտալի Տկաչևից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 290.167 (երկու հարյուր իննսուն հազար հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես մինչև 2018-2020-ին Տաշիր համայնքի քաղաք Տաշիր, փողոց Երևանյան, փ. 1, թաղ. 14, տուն 10 հասցեում հաշվառված NISSAN ELGRAND 3.5L մակնիշի, 35QC430 հերթական համարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար,որից 53.917 (հիսուներեք հազար ինը հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդ օրվանից:

6. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081025 հաշվարկային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 01
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 փետրվարի 2021 թվականի N 54-Ա

## «ՎԵՍՆԱ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վեսնա» արտադրական կոոպերատիվի տնօրեն Լյովա Սուքիասյանի 2021 թվականի փետրվարի 1-ի N4 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի, Տաշիր համայնքի ավագանու 2020թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2021թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին»N 97-Ն որոշումով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թաղամաս 1 հասցեում գործող «Վեսնա» արտադրական կոոպերատիվի տնօրեն Լյովա Սուքիասյանի հայտը բավարարել և տալ 2021 թվականի համար սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ
RA LORI REGION TASHIR MUNICIPALITY
ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ТАШИР

2021թ. փետրվարի 01
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 փետրվարի 2021 թվականի N 55-Ա

## ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48 և 76, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբեր 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2018 թվական հոկտեմբերի 15 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի արոտավայրերի և խոտհարքերի օգտագործման համար վճարի չափը սահմանելու մասին» N 87-Ն որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող 06-008-0308-0006 կադաստրային ծածկագրով 1,05 հա գյուղատնտեսական նպատակային 3-րդ կարգի արոտավայրը վարձակալությամբ տրամադրել Վահան Վազգենի Գրիգորյանին:

2.Վահան Վազգենի Գրիգորյանի հետ կնքել արոտավայրի վարձակալության պայմանագիր 3 տարի ժամկետով, տարեկան 4820 (չորս հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամ վարձավճարով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. փետրվարի 01
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 փետրվարի 2021 թվականի N 56-Ա

## ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48 և 76, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբեր 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2018 թվական հոկտեմբերի 15 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի արոտավայրերի և խոտհարքերի օգտագործման համար վճարի չափը սահմանելու մասին» N 87-Ն որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող 06-008-0308-0005 կադաստրային ծածկագրով 30.82 հա գյուղատնտեսական նպատակային 3-րդ կարգի արոտավայրը վարձակալությամբ տրամադրել Վահան Վազգենի Գրիգորյանին:

2.Վահան Վազգենի Գրիգորյանի հետ կնքել արոտավայրի վարձակալության պայմանագիր 3 տարի ժամկետով, տարեկան 141470 (մեկ հարյուր քառասունմեկ հազար չորս հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ վարձավճարով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 01
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 փետրվարի 2021 թվականի N 57-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետը, 48-րդ և 53-րդ կետի բ) ենթակետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Մամեդ Ռուտենիչ Ասոևին, Սիմար Ռոստոմի Ասոևին, Նազիկ Մամեդի Ասոևին, Նինա Մամեդի Ասոևին, Գալինա Մամեդի Ասոևին, Նյուրա Մամեդի Ասոևին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N 1307342, տրված՝ 10.02.2006 -ին) ՀՀ Լոռու մարզ, Տաշիր ք. Սոլնեչնայա փողոց, թիվ 2 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 14-րդ թաղամաս, Արևային փողոց, թիվ 2 հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. փետրվարի 02
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 փետրվարի 2021 թվականի N 58-Ա

## ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, ԹԱՂԱՄԱՍ 6, ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 197/2 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշումը,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 33-րդ և 34-րդ կետերը, 35-րդ կետի բ) ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի 9 դեկտեմբերի N 2387-Ն որոշում հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով, 48-րդ կետով, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, հաշվի առնելով այն , որ Տաշիր քաղաքի 06-008-0117-0014 կադաստրային ծածկագրով 0,00147 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լոռու մարզի Տաշիր քաղաքի (06-008-0117-0014 ծածկագրով) համայնքին պատկանող 0,00147քմ հողամասի վրա քաղաքացի Աշոտ Պետրոսի Նարգիզյանի կողմից ինքնակամ կառուցված 12.14քմ մակերեսով խանութի նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող 12.14քմ մակերեսով խանութը համարել օրինական՝ համաձայն ներկայացվող շինությունների հատակագծի և բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Աշոտ Պետրոսի Նարգիզյանին առաջարկել, օրինականացված կառույցը և կից հողամասը պետական գրանցում ստանալուց հետո, ուղղակի վաճառքի կարգով գնել գործող տուրքի և հողամասի կադաստրային արժեքի չափով՝

1) Հողամասի համար՝ 11643 (տասնմեկ հազար վեց հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ,
2) Խանութ՝ 13354 (տասներեք հազար երեք հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ:

5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 6-րդ թաղամաս,Երևանյան փողոց, թիվ 197/2:

6. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 02
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 փետրվարի 2021 թվականի N 59-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԶԻՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Զինա Հայրապետյան»-ի 2021 թվականի փետրվարի 2-ի N23 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45 -րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Դպրոցականների փողոց, թաղամաս 9 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Զինա Հայրապետյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի առաջին եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 02
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 փետրվարի 2021 թվականի N 60-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԻՐԻՆԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Իրինա Թովմասյան»-ի 2021 թվականի փետրվարի 3-ի N24, հայտը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45 -րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 7-րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 218 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Իրինա Թովմասյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի առաջին եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. փետրվարի 03
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 փետրվարի 2021 թվականի N 61-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԻՐԻՆԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ»-ԻՆ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Իրինա Թովմասյան»-ի 2021 թվականի փետրվարի 3-ի N5 հայտը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45 -րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2018թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N97-Ն որոշումով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 218 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Իրինա Թովմասյան»-ի հայտը բավարարել և նրան 2021 թվականի համար տրամադրել հեղուկ վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. փետրվարի 03
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

03 փետրվարի 2021 թվականի N 62-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Լոռու մարզային վարչության պետ Կարեն Աչչանգյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի փետրվարի 2-ի ՄՀ-29-21)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Լոռու մարզային վարչությանը տալ Տաշիր համայնքի Ազգային անվտանգության ծառայության վարչական շենքի կառուցման նախագծման թույլտվություն:

2.Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Լոռու մարզային վարչությունը՝ ի դեմս Լոռու մարզային վարչության պետ Կարեն Աչչնգյանի, պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. փետրվարի 03

ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 փետրվարի 2021 թվականի N 63-Ա

## ՍԱՐԳԻՍ ՄԱՅԻՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի 596-Ն որոշումով, ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N97-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետով, հիմք ընդունելով քաղաքացի Սարգիս Մայիսի Հարությունյանի դիմումը՝ (մուտք՝ 2021 թվականի հունվարի 27-ի ՄԴ 35-21)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Սարգիս Մայիսի Հարությունյանին տալ ավտոտնակի կառուցման շինարարության թույլտվություն:

2. Սարգիս Մայիսի Հարությունյանին՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081207 հաշվեհամարին մուծել 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ շինարարական թույլտվության համար:

3.Սարգիս Մայիսի Հարությունյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայքի ղեկավարին ներկայացնել 2-5 ձևի տեղեկանք:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. փետրվարի 04
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 փետրվարի 2021 թվականի N 64-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հունիսի 1-ի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» N186-Ն հրամանով, հիմք ընդունելով «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կատարված չափագրումը և այն, որ չափագրման արդյունքում 06-008-0117-0003 կադաստրային ծածկագրով հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0,12956 հա՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. Հաստատել Հովհաննես Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող, Ջահուկյան փողոց, թիվ 8ա հասցեում 06-008-0117-0003 կադաստրային ծածկագրով, 0.1357 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի սահմանները՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

**2021թ. փետրվարի 04**
**ք.Տաշիր**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 փետրվարի 2021 թվականի N 65-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N 513-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկվարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով,և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387- Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի գ) ենթակետը, 48-րդ կետը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող 0.025հա (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0022-0003) հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 1, Երևանյան փողոց,թիվ 25/10 հողամաս փոստային հասցեն:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 1-ի «Անշարժ գույքի հասցեավորման մասին» N 513-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. փետրվարի 05
ք.Տաշիր